№ 7 Յունվարի 24 (Փետրվարի 5) 1879 Յունվարի 24 (Փետրվարի 5) № 7

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և ասն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ՓՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 թվին

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի ասն և ասներին հետեւեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարվանը 6 ռուբլի։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի նոր գործ։—Ներքին տեսութիւն, Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ «Голосъ»լրագրի թղթակցութիւնը հայերի մասին։ Ֆրանսիա։ Սպանիա։ Նամակ Թիւրքիայից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ՄԻ ՆՈՐ ԳՈՐԾ

—

Ընթերցողը կը գտնի «Մշակի» ներկայ համարի մէջ մի լուր, որ այս մեծ պասին Թիֆլիսի հայ երիտասարդների մի խումբ դիտաւորութիւն ունի կազմել մի շրջան այլ և այլ առարկաների վրա հայերէն լեզուով հրապարակական դասախօսութիւններ կարդալու համար։

Չէ կարելի չը համակրել երիտասարդների այդ դիտաւորութեանը, որովհետև հրապարակական դասը լուսաւորութիւնը հասարակութեան մէջ տարածելու նոյնպէս ամենաշօրեղ միջոցներից մինն է, ինչպէս ուսումնարանը, լրագրութիւնը և թատրոնը։

Մենք միշտ յայտնել ենք այն միտքը, որ թատրոնը, լրագրութիւնը և հրապարակական դասախօսութիւնը հասակ առածների համար ուսումնարան է։

Մենք աւելորդ ենք համարում խօսել այն բանի վրա թէ որքան նշանակութիւն պէտք է ունենան հայերէն հրապարակական դասախօսութիւնները ժողովրդի մէջ մայրենի լեզու տարածելու համար։ Մենք կը նայենք այդ գործի վրա միայն կրթողական կէտից։

Կենդանի խօսքը միշտ աւելի ազդող է քան թէ տպված գիրքը, լրագիրը կամ ամսագիրը։ Բացի սորանից կան շատերը հայերի մէջ, որոնք շատ գեղեցիկ են հասկանում հայերէն, իրանք մինչև անգամ խօսում են մայրենի լեզուով, բայց կարդալ չը գիտեն։ Այդպիսիների համար կենդանի խօսքը, հրապարակական դասը կը փոխարինէ լրագրի կամ գրքի ընթերցանութիւնը, որ շատերի համար անմատչելի է, որովհետև նրանք կարդալ և գրել չը գիտեն։

Ուրեմն, եթէ այդպէս է, դասախօսութիւնները չափազանց ժողովրդական պէտք է լինեն, կասեն մեզ, որովհետև հայերէն խօսող, բայց հայերէն կարդալ գրել չիմացող մեր ժողովրդի ստորին դասակարգը, ամբոխն է։

Դա սխալ է։ Հայերէն կարդալ գրել չիմացողը, բայց հայոց խօսած լեզու հասկացողը նոյնպէս և մեր միջին և բարձր դասակարգի մի մասն է....

Բայց ի՞նչ կարող է սովորել մեր բարձր դասակարգը մեր երիտասարդ դասախօսներից, կը հարցնեն մեզ։ Այն բանը կը սովորեն նրանք, կը պատասխանենք մենք, ինչ որ սովորեցին քանի մի տարի սրանից առաջ Կրուժկում ռուսաց լեզուով դասախօսներից, ինչ որ սովորեցին և սովորում են մեր լրագրութենից....

Ի հարկէ դասախօսութիւնները պէտք է ժողովրդական լինեն, բայց նրանք բոլորովին հարկաւորութիւն չունեն չափից դուրս ժողովրդական լինելու։

Գիտութիւն ստացած մարդիկ մենք էլ նոյնքան ունենք, որքան ռուս հասարակութիւնը։ Բայց պէտք է, ի հարկէ, խիստ ընտրութիւն անել դասախօսելու առարկաների մէջ։

Մեր կարծիքով ամենից շատ հետաքրքրում են հայերին հետեւեալ նիւթերը՝ հայոց գրականութիւնը, բժշկականութիւնը և առողջապահութիւնը, տնտեսական և ուսումնարանական հարցերը։

Հարկաւոր է նոյնպէս որ շրջանը կազմող երիտասարդների մէջ լինի կատարեալ համերաշխութիւն, որովհետև նրանք պէտք է կազմեն մի տեսակ մասնաժողով կամ խմբագրութիւն, ուրեմն այդ տեսակ ընդհանուր գործ չեն կարող օգնութեամբ առաջ տանել հակառակ, միմեանց հակասող ոյժերը, միմեանց մէջ տարբեր կարծիքներ, համոզմունքներ և հայեացքներ ունեցող անձինք։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Վաղարշապատ, 2 յունվարի

Ամեն մտածող հայ, ըստ երևոյթին, ցանկանում է օգնել Թիւրքիահպատակ հայերի ներկայ աննախանձելի դրութեան բարւոքելուն և այդ նպատակին հասնելու ամենաշօրաւոր միջոցը համարում է Հայաստանում ուսում տարածելը։ Որովհետև այդ նպատակին ծառայելու և իրագործելու համար արդէն կազմվել է Կ. Պոլսում «Արարատեան ընկերութիւնը», ուստի ամենքն էլ ցանկութիւն են յայտնում դրամական օժանդակութիւններ հասցնել այդ ընկերութեանը, սակայն շատ քիչերն են իրագործում այդ գովելի ցանկութիւնը։ Գուցէ այս տխուր երևոյթի պատճառն այն է, որ մենք, հայերս դեռ հասած չենք զարգացման այն աստիճանին, որ մեր ցանկութիւնը ինքնուրոյնաբար իրականացնելու չափ կարողութիւն չունենք և սպասում ենք, որ մեզ առաջնորդեն, որ մեզանից պահանջեն անել այն, ինչ որ մենք ինքներս արդէն ցանկանում ենք անել։ Այս ի նկատի ունենալով ես ցանկանում եմ մի առաջարկութիւն անել, որ գուցէ ընդունելութեան արժանի կը լինի։ «Արարատեան ընկերութիւնը» թող չը բաւականանայ նրանով, որ նրա պատուելի անդամներից մէկը, պ. Փորթուգալեանը, մեր լրագրութեան միջոցով հրաւէր կարդաց և նոյն ինքն լրագրութիւնը հրաւիրում է ռուսահպատակ հայերին օգնել ընկերութեանը, թէև այդ հրաւէրները անպտուղ չը մնային, այլ աւելի լաւ կը լինէր, իմ կարծիքով, որ ընկերութիւնը իր «քաժանում» բաց անէ Թիֆլիսում և դիմէ սրբազան պատրիարքի միջնորդութեամբ հայոց ընդհանուր կաթուղիկոսին չրջաբերականով պատուիրել բոլոր թեմական առաջնորդներին և նրանց փոխանորդներին վիճակներում, ստորագրութիւն բանալ թէ միանուագ նուէրները և թէ մշտական անդամներ ընդունելու համար։ Այն ժամանակ, թող «Արարատեան ընկերութիւնը» համոզված լինի, որ ամեն հայեր, թէ ցանկացողներ և թէ չը ցանկացողներ, սիրով կընդունեն կատարել իրանց Հայրապետի կամքը և նա զգալի օգնութիւն կը ստանայ և մեծ յառաջադիմութիւն կանի։ Ընկերութեան այս անդամակցութիւնը մի աւելի և զօրեղ բարոյական օգուտ կը բերի ընդհանուր ազգութեանը, որովհետև երկու տէրութեանց հպատակ մի ազգի անդամները, որք տարիների ընթացքում զանազան պատմական անաջող հանգամանքներով անջատված են իրարից, միմեանց հետ բարոյական կապ ունենալով, աւելի մօտաւորապէս կը ծանօթանան մէկը միւսի վիճակի հետ, հետևաբար և աւելի գործնականապէս կաչխատեն հոգալ և լրացնել ազգի պիտոյքը։

Ես իմ կողմից ուղարկելով սրա հետ հինգ ռուբլի յօգուտ «Արարատեան ընկերութեան», պարտաւորացնում եմ ինձ խոստումով վճարել այս գումարը իւրաքանչիւր տարի, յուսալով որ ընկերութիւնը պատիւ կանի ընդունել ինձ իր անդամների կարգում։

Մ. Տէր-Պետրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ հայ երիտասարդների մի խումբ դիտաւորութիւն ունի այս մեծ պասին, տեղիս կլուբների դահլիճներից մինի մէջ հրապարակական դասախօսութիւններ կարդալ հայերէն լեզուով։ Աջողութիւն ենք ցանկանում երիտասարդներին։ Ասում են որ դասախօսութիւնների նպատակը բարեգործական է։

—

«Մշակի» խմբագիր, Գրիգոր Արծրունի, դիտաւորութիւն ունի ներկայ տարվայ աշնանը ճանապարհորդել Անդրկովկասի հայաբնակ քաղաքները՝ Ախալցխա, Ալէքսանդրապոլ, Երևան, Ագուլիս, Վաղարշապատ, Շուշի, Շամախի, Բաքու, Գանձակ, և իւրաքանչիւր քաղաքում մի մի հրապարակական դասախօսութիւն կարդալ հայերէն լեզուով, այլ և այլ առարկաներից։ Ի հարկէ դասախօսութիւնները սկզբից գրված և

ներկայացրած կը լինեն ուսումնարանական վարչութեան հաստատութեանը։

—

Մեզ հաղորդում են Բաթումից, որ յունվարի 15-ին այնտեղ հրդեհ է պատահել։ Մօտ տասխանութիւններ բոլորովին այրվել են։

—

ԹԻՖԼԻՍԻ հայերը հայոց լեզուի մէջ միշտ յետ ընկած են եղել և թոյլ, բայց ահա մի օրինակ նրանց ընդհանուր մտաւոր թուլութեան. Թիֆլիսի տէրունական ուսումնարանների գոյութեան սկզբից մինչև այժմ նրանց մէջ առաջադէմ աւարտողները համարեա բացառապէս եղել են հայերը, որոնց մէջ մի և նոյն ժամանակ գրեթէ երբէք չէ պատահել Թիֆլիսցի հայ, այլ բոլորը եղել են օտարաքաղաքացիք և գլխաւորապէս ղարաբաղցիք։ Նոյն երևոյթը չարունակվում է աւելի նշմարելի կերպով և այժմ, երբ գիմնազիաների մէջ ուսման ընթացքը ընդարձակել են և դժուարացրել. այժմ ինչպէս քանակութեամբ այնպէս և առաջադիմութեամբ գիմնազիաների մէջ, մանաւանդ բէալական, զօրեղ կերպով տիրապետում են հայերը, որոնց մէջ Թիֆլիսցիք դարձեալ յետին տեղն են բռնում թւով և որակութեամբ։ Ինչով բացատրել այս, եթէ ոչ մայրենի լեզուի պակասութենից իւրաքանչիւր ընտանեաց մէջ։

—

ՂԱՐՍԻՑ գրում են որ գեներալ Լազարեվի ուղարկած առանձին պատգամաւորութիւնը Իսմայիլ-փաշայի մօտ ալաշկերտցիների վիճակը բարւոքելու համար, արդէն բերում է իր պտուղը. երկու օր առաջ եկաւ Ալաշկերտից մի հայ երիտասարդ, որը պատմեց Իսմայիլ-փաշայի բարերարութիւնները և զանազան կարգադրութիւնները։ Յետ դառած ալաշկերտցիներին բաժանում են մարդագլուխ $2^1/_2$ կօդ ցորեն, բացի այն որ բոլորին վերադարձնում են իրանց տները, հողերը, կայքը և բոլոր ունեցած գործիքները, իսկ քիւրդերից պաշտպանում է նրանց հայաբնակ գիւղերը ցրված սուվարի զօրքը, որ խումբ խումբ միշտ շրջում է գիւղերի մէջ։ Ղարսից նմանապէս գրում են որ երեք օր առաջ ուղևորվեց դէպի Թիֆլիս հայազգի Սարգիս-փաշան, որ ուղարկված է սահմանագլուխը որոշող տաճկական յանձնաժողովի նախագահ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Голосъ» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գրում է հետևեալը.

«Ղազանդաղը մի լեռնային երկիր է, որ Փոքր-Ասիայում հին Կապադոկիայի և Կիլիկիայի սահմաններն է կազմում։ Տավրեան լեռը նրա երկայնութեամբ է ձգվում։ Դրա բաժիններից մէկն էլ Զէյթուն նահանգն է, որ պատկանում է Մարաշի մուտեսարիֆլիկին (Ալեպի վիլայէթին)։ Բացառապէս հայերով բնակեցրած այդ նահանգի մէջ երեք տարի սրանից առաջ մի ապստամբութիւն ծագեց, որի առաջնորդը արաբ Ահմէդ-փաշան էր և որ լրագրական դատողութիւնների առարկայ դարձաւ։ Յայտնի է որ այդ ապստամբութիւնը վերջացաւ Ահմէդ-փաշայի դաւաճանութեամբ։ Նա անձնատուր եղաւ Իզետ-փաշային, երբ սա խոստացաւ թէ սուլթանը կը ներէ ապստամբ փաշայի յանցանքը։ Ահմէդ-փաշան ճշմարիտ թողութիւն ստացաւ, բայց կառավարութիւնը չը ներեց զէյթունցիներին, որոնք մի ժամանակ գործում էին այդ ապստամբի հետ և վճռեց առաջին պատահած յարմար դէպքին վրէժխնդիր լինել նրանց։

Զէյթունցիները քաջ և աներկիւղ լեռնաբնակներ են և երբէք անպայման չեն հպատակվել Բ. Դրան տիրապետութեանը։ Նրանց աղաները թիւրք կայմակամների իշխանութեան տակ կառավարող հայեր են։ Նոքա վաղուց անբաւական են կենտրոնական կառավարութենից, որ իր գործակալների ձեռքով նրանց անխնայ կողոպտում է և նրանց վրա ամեն տեսակ հարկեր է դնում։ Զէյթունցիները մեծ մասամբ կարավաններ տանողներ են և իրանց բեռնակիր կենդանիներով նոքա ապրանքներ են տեղափոխում Անկիպպոյ, Մարաշ և մինչև անգամ Էրզրում։ Այս պարապմունքը նրանց եկամուտի գլխաւոր աղբիւրն է։ Հասկանալի է, որ նրանց համար չափազանց ծանր էր առանց վարձատրութեան աշխատել։ Այդ հանգամանքը նրանց աւելի գրգռեց, որովհետև այդպիսի հարկառութիւնը խլում էր նրանցից օրական ապրուստ հայթհայթելու վերջին միջոցները։ Զէյթուն քաղաքի տարեկան հարկը վերջին ժամանակները 30,000 պիաստրից հասցրած է 370,000։ Հայոց ներսէս պատրիարքը ի զուր էր բողոքում հարկի մինչև այդ աստիճան մեծացնելու դէմ և թէպէտ մեծ վեզիր Սաֆֆէտ-փաշա խոստացաւ նրան այս տարի աւելացրած հարկը չը պահանջել, այնուամենայնիւ կառավարութեան գործակալները բնակիչներից պահանջում էին և աւելորդը։ Քաղաքացիք ընդդիմանում էին և 5000 բնակիչներ ունեցող քաղաքի մութեսարիֆը չէր համարձակվում բռնի կերպով առնել հարկը։ Այդ ժամանակ նա խնդրեց Ալեպի նահանգապետի օգնութիւնը, որ հոդ չը տանելով Սաֆֆէտ-փաշայի հայոց պատրիարքին տուած խոստումների մասին, գնաց Զէյթունի վրա իր հետ առնելով հետևակ և հեծելազօրք և թնդանօթներ։ Այդ զօրքերը նոյեմբերի 30-ին հասան Զէյթուն։ Քաղաքի դռներից մի փոքր հեռու կանգնելով փաշան հրաւիրեց իր մօտ Զէյթունի կայմակամին և անուանի քաղաքացիներին, որպէս զի պայմանաւորվի նրանց հետ հարկերի մասին։ Այդ տեսութիւնը շատ բարեկամական էր և հաւատիանալով, որ գործը ընդհանուր համաձայնութեամբ կը վերջանայ, զօրքերը անուանի հայերից առաջնորդված մտան քաղաքը։ Այդտեղ փաշան փոխեց իր ընթացքը և յայտնեց բնակիչներին, որ հրաման է ստացել հաւաքել ապառիկները և նոր հարկը տարեկան 370,000 պիաստր հաշուելով։ Որովհետև այդ վարմունքը ոչ թէ միայն փաշայի, այլ և մեծ վեզիրի խոստումների հակառակ էր, գրգռված բնակիչները վճռեցին ընդդիմանալ։

Զօրքերը կանգնելով Զէյթունի հրապարակի վրա, գրաւեցին Աստուածամօր հայոց վանքը։ Հայերը մտադրվեցան շրջապատել վանքը գիշերով, զենաթափ անել թիւրքերին և դուրս գցել նրանց քաղաքից։ Բոլորը ծածուկ սկսեցին պատրաստվել այդ համարձակ մտադրութիւնը իրագործելու համար։ Բայց ինչպէս երեք ամիս սրանից առաջ դաւաճանութիւնը գարձեալ արգելեց գործի աջողութեանը։

Հայ կաթոլիկները, որոնց թիւը Զէյթունի մէջ բաւական մեծ է, մատնեցին իրանց հայրենակիցներին, դարձեալ դաւաճանելով նրանց նոյնպէս, ինչպէս Ահմէդ-փաշայի ապստամբութեան ժամանակ։ Փաշան այդ նախազգուշութիւնը ստանալուց յետոյ առանց ժամանակ կորցնելու հրաման կալանաւորել բոլորին, որոնց մատնեցին հայ կաթոլիկները։ Երկու հարիւր հայ լուսաւորչականներ նրանց թւում և Զէյթունի եպիսկոպոսը բռնվեցան իրանց տներում և տարվեցան Աստուածամօր վանքը. միւսները փախան սարերը։ Դրանից յետոյ ընդդիմադրութիւնը անկարելի դարձաւ և փաշան իր քմաց համեմատ սկսեց հարկեր հաւաքել։ Հայերը հաւաքվեցան և վճարեցին բոլորը, ինչ որ կարող էին։ Ողորմելի աղքատներից խլեցին նրանց վերջին կայքը։ Նրանց շարժական կայքը աճուրդով ծախեցին. կաթոլիկ հայերը և մահմեդականները նրանց ընչին գնով առան։ Հարկը հաւաքելուց յետոյ Ալեպի փաշան հեռացաւ իր զօրքերով իր հետ տանելով և գերիներին, որոնց յետոյ ուղարկեցին Մարաշ։ Ճանապարհին այդ ողորմելիների հետ սարսափելի կերպով էին վարվում։ Զէյթունի եպիսկոպոսից, որ շղթայակապ էր, հանեցին հանդերձը և նա ենթարկվում էր սարսափելի վերաւորանքների և անգութ ծեծի։ Պէտք է նկատել, որ Զէյթունի և Մարաշի մէջ 12 ժամվայ ճանապարհ է։

Մարաշի մուտեսարիֆը պատրաստվում է հրացանի առնել գերիներին, բայց Ֆրանսիական հիւպատոսը խառնվեցաւ և յայտնեց իր դեսպանի կողմից, որ նա ընդդիմանում է գերիների պատժելուն։ Մուտեսարիֆը վախենալով հիւպատոսի ընդդիմադրութենից, յետաձգեց պատիժը։ Ահա ինչ պատահեց այդ ժամանակ Կ. Պօլսում։ Ֆրանսիական դեսպան պ. Ֆուրնիէ, պատրիարքից այդ անցքի մասին տեղեկութիւն ստանալուց յետոյ, հեռագրեց իր հիւպատոսին, որ նա Ֆրանսիական կառավարութեան անունով ընդդիմանայ գերիների սպանելուն։ Ողորմելիները իրանց կեանքի ապատելուն այդ հեռագրին են պարտական, որ պատիւ է բերում պ. Ֆուրնիէին և որ Մարաշում մեծ տպաւորութիւն ունեցաւ։ Գերիներից շատերը, մօտ 130 մարդ ազատված են, մնացածներին պահել են Մարաշի բանտերում, բացի Զէյթունի եպիսկոպոսից, մի վարժապետից և մի անուանի քաղաքացուց, որոնք շղթայակապ ուղարկված են Կ. Պօլիս և այնտեղ բանտարկված ամենավերջին յանցաւորների հետ։

Հայոց պատրիարքը այդ գերիների Կ. Պօլիս հասնելու լուրը ստանալուց յետոյ, գնաց պ. Լայարդի մօտ և խնդրեց նրա պաշտպանութիւնը թիւրքաց գազանութեան այդ երեք զոհերի համար։ Պ. Լայարդ իր սովորութեան համեմատ հաւատացրեց պատրիարքին, որ այն բէֆօրմները, որոնց իր կառավարութիւնը ապահովել է անյապաղ կիրագործվեն, մի քանի մխիթարական խօսքեր ասաց և բոլորովին ոչինչ չառաւ, ասելով թէ ամեն բան 24 ժամվայ մէջ չէ կարելի կատարել։» Պէտք է խոստովանվել, որ Ֆրանսիական դեսպանը այդ դէպքում աւելի եռանդով և մարդասիրութեամբ գործեց, քան թէ նրա անգլիական ընկերը։

Ներսէս պատրիարքը այնու ամենայնիւ չը յուսահատվեցաւ և դիմեց Բ. Դրանը, խնդրելով ուղարկել պատրիարքարանը թէ եպիսկոպոսին և թէ նրա կալանաւորված ընկերներին նրանց ընդհանուր բանտի սարսափելի և նեղութիւնից ազատելու համար։ Պատրիարքի խնդիրքի մէջ ասված էր, որ իր երեք հաւատակիցները չեն ապստամբվել սուլթանի կառավարութեան դէմ ինչպէս հաւատացնում էր Մարաշի մուտեսարիֆը, այլ միայն արտայայտել են զէյթունցիների գանգատները թիւրք կառավարիչների չարագործութեան և ապօրինի հարկերի հաւաքելու դէմ, որոնց նրանք հաւաքում էին նախկին մեծ վիզիրի խոստման հակառակ։ Պէտք է խոստովանել ի պատիւ Հէյրեդին-փաշայի, որ արեզայի (պատրիարքի) միջնորդութիւնը ի նկատի առնվեցաւ, և երեք զէյթունցիները պատրիարքարանի պաշտպանութեանը յանձնվեցան։

Սրանք են այն փաստերը, որոնց Ալեպի նահանգապետը մեծ նշանակութիւն է տուել և որոնք կատարվել են թիւրքաց վարչութեան չարագործութեան պատճառով։ Ի նկատի ունենալով այս չարագործութիւնները և մեղաւոր պաշտօնական անձանց անպատիժ մնալը, չէ կարելի չառաջարկել հետևեալ հարցը. ի՞նչ օգուտ ստացան հայերը Բերլինի դաշնագրի 61 յօդուածի համեմատ Բ. Դրան առած պարտականութիւններից անյապաղ իրագործել այն բարենորոգութիւնները, որ անհրաժեշտ են ճանաչված նրանց ապահովութեան համար և ի՞նչտեղ երևաց այն հսկողութիւնը, որ մեծ պետութիւնները պարտաւորվել են անել հայերի համար։ Ի նկատի ունենալով, որ վարչական անկարգութիւնները լինում են ոչ թէ միայն Զէյթունի մէջ, այլ և Վանի, Մուշի, Խարբերդի և Դիարբեքիրի մէջ։ Մի շաբաթ չէ անցնում, որ այդ տեղերի եպիսկոպոսները չուղարկէին պատրիարքարանը գանգատներ հայերի անտանելի դրութեան մասին։ Ներսէս պատրիարքը իր կողմից դիմում է Բ. Դրան գանգատներով և բողոքներով, որոնց Դուռը պատասխանում է իր սովորական բախալըմ (կը տեսնենք)։ Վերջին մեծ վիզիրը, որ բաւական լուսաւորված և բարի մարդ էր, պաշտօնապէս խոստացաւ պատրիարքին թեթևացնել նրա հայրենակիցների տանջանքները վերանորոգութիւնը մտցնելով երկրի մէջ, բայց նա էլ ընկաւ առաջ քան թէ կարողանար կատարել իր խոստումները, իսկ պատրիարքի կողմից մեծ պետութիւնների դեսպաններին ներկայացրած բողոքները նոյնպէս չեն աջողվում։

Բ. Դուռը մոռանում է, որ առաջ և նոր բերումն անգամ հայերը Թիւրքիային մեծ ծառայութիւններ էին մատուցանում, և որ հայ պաշտօնեաները և ժողովուրդի արդիւնաբերական ոգին օգնում էին այդ կայսրութեան ֆինանսական գոյութեանը։ Նկատված է, որ կառավարութիւնը սիստեմատիկաբար հեռացնում է հայերին պետական պաշտօններից և աւելի մօտենում է իր յոյն հպատակներին, որոնց մինիստրների, մինչև անգամ արտաքին գործերի մինիստրի պաշտօններ է յանձնում։ Մի և նոյն ժամանակ հելլենականութիւնը այժմ աւելի պատերազմում է իսլամի հետ։ Այս անխելացի բացառականութիւնը բարձրացրեց հայերի անբաւականութիւնը։ «Կառավարութիւնը պէտք է չը մոռանար, ասում են նրանք, որ Հայաստանի մէջ ապրում են մի քանի միլիոն քաջ բնակիչներ, որոնք եթէ միանային անբաւական արաբների հետ, կարող էին վտանգի ենթարկել Թիւրքաց տիրապետութիւնը ասիական նահանգներում։» Հաջնում պատահած վերջին ապստամբութիւնը, որտեղ Ղազանդաղի հայերը օգնեցին Ահմէդ-փաշային, ցոյց տուեց, որ Ասիայի այժի այդ տարրը պէտք է ի նկատի ունենալ։ Եւ ճշմարիտ եթէ Ահմէդ-փաշա չը դաւաճանէր այդ ապստամբութիւնը մեծ վտանգ կը պատճառէր Օսմանեան տիրապետութեանը Ասիայում։

Մի և նոյն ժամանակ Բ. Դրան գործածած խիստ միջոցները Զէյթունի հայերի դէմ չեն կարող հանգստացնել այդ երկրի պատերազմական ժողովուրդին և այժմ Ղազանի մէջ արդէն խօսում են նոր ապստամբութեան մասին, որ նախկին ապստամբութեան բռնի կերպով ճնշելու հետևանք կը լինի։ Իմ կարծիքով Դուռը շատ խոհեմ կը լինէր, եթէ շուտով իրագործէր խոստացած բէֆօրմները. այդպիսով նա կը գրաւէր Փոքր-Ասիայի բնակիչների համակրութիւնը։

Հայերը ժամանակից օգուտ են քաղում իրանց ազգային գոյութիւնը ամրացնելու համար։ Նոքա կամենում են այսուհետև իրանց վրա յուսալ, որովհետև թիւրքերից այլ ևս ոչինչ յոյս չունեն։ Կ. Պօլսի մէջ կազմվեցան բազմաթիւ ընկերութիւններ, ուսումնարաններ, երկրագործական և ֆինանսական հիմնարկութիւններ հաստատելու համար այն երկրի մէջ, որ հայ ժողովուրդի օրօրոց է եղել։ Դրանք ուսում և բարօրութիւն պէտք է տարածեն ամբոխի մէջ։ Վանի մէջ այդ նպատակով մի ուսումնարան է հիմնած։ Մի խօսքով հայերի մէջ ընդհանուր ձգտումներ են նկատվում և երբ կը խփի նրանց ազատութեան ժամը, որ այդքան ցանկալի է, նոքա չը նայելով իրանց փոքր թըվին, մի ուժեղ և հպօր ազգ կազմելով, նշանաւոր տեղ կը բռնեն ժողովրդական մեծ ընտանիքի մէջ։ Այդ ժամը շատ հեռու չէ։ Այն ժամանակ նրանց մասին չի կարելի այնպէս խօսել, ինչպէս խօսեց Սադուլա-բէյ Բերլինում, որ հեռացրեց նրանց կօնգրէսին

մանակցելուց այն հիման վրա, որ «Հայերը ազգութիւն չեն կազմում։» Նրանց Հարևան Ռուսաստանի գործն է խրախուսել, օգնել և առաջնորդել այդ յառաջադիմական և գեղեցիկ գործի մէջ։»

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական մի քանի լրագիրներ, այս օրերս սկսել են տաք տաք խօսել Բերլինի «National-Ztg.» լրագրի մի յօդուածի մասին, որի մէջ յօդուածագիրը այն միտքն է յայտնում, որպէս զի Էլզաս-Լոտարինգիան վերադարձնվի նորից Ֆրանսիային։

Ահա թէ ինչ է խօսում սրա մասին «Temps» լրագիրը. նա ասում է որ մենք հարկաւորութիւն չունենք նկատելու, որ այսպիսի խօսակցութիւնները մեզ շատ երեխայական և մինչև անգամ շատ անպատշաճ են երևում։ Ժողովրդական կարծիքը երբէք դրանով չէ հետաքրքրվում, և մենք աւելորդ ենք համարում այդ մասին խօսելու։

Բայց այս առիթով մի քանի լրագիրներ թոյլ են տուել իրանց մի քանի նախադասութիւններ ասել, որը մենք չենք կարող լռութեամբ անցնել. օրինակ, աւելացնում է «Temps», մի լրագիր ասում է, որ այդ երկու նահանգները խլվեցին մեր ձեռքից «պատերազմի անաջողութեամբ», մինչդեռ անդլիական մի լրագիր էլ, երկար ու բարակ դատողութիւններ անելով, վերջապէս հասնում է այն եզրակացութեան, որ այդ նահանգները մենք ցանկարծ» կորցրինք։

Մենք չենք կարծում, ասում է վերը յիշած լրագիրը, որ այսպիսի տղայամիտ դատողութիւններով մենք կարողանանք մի բան աւելացնել մեր ազգային պատուին. «ոչ ցանկարծը» և ոչ էլ պատերազմի «անաջողութիւնն» է, որ մեզ կորցնել տվեց այդ երկու նահանգները, այլ մեր քաղաքական և պատերազմական սխալանքներն են, որ մեզ այդ անել տուին. և եթէ Գերմանիան տէր է այսօր այդ երկու նահանգներին, պէտք է խոստովանել դրա անհերքելի պատճառն այն է որ Գերմանիան սկսեց այդ պատերազմը ամենանուրբ քաղաքականութեամբ, ճարպիկութեամբ, և զորքերի անհամեմատ առաւելութեամբ։ Եթէ մենք կամենում ենք գրաւել մեր հարևան պետութիւնների և մեր բարեկամների յարգանքն ու սէրը և եթէ կամենում ենք լինել մի զօրեղ ազգ, ամենից առաջ մենք պէտք է ողջմտութիւն և քաջութիւն ունենանք ճանաչել և յայտ յանդիման ասել ճշմարտութիւնը, մինչև իսկ այն ժամանակ, եթէ դրանով մեզ կը պախարակէին, միայն հասարակական այսպիսի ողջամիտ և անյողդողդ կարծիքն է, որ ծառայում է իբրև ճշմարիտ հիմք որ և է ժողովրդի ապագայ փառքի մեծութեան։ Ինչո՞ւ պէտք է մենք այսօր տարակուսենք խոստովանելու ճշմարտութիւնը, երբ ութ տարի սրանից առաջ հէնց պատերազմի թշուառութիւնների ու կրիզիսի ժամանակ, այն ժամանակ երբ մենք, թշնամուց պաշարված ու ոգևորված հայրենասիրական նախանձով էլ, դարձեալ չը վախեցանք քաջութեամբ խոստովանելու ճշմարտութիւնը։

Ի՞նչ կասէինք մենք, աւելացնում է լրագիրը, եթէ օրինակ Բերլինի լրագրապետները գրէին թէ 1807 թուի Պրուսիայի, Իէնայի և Աուէրստադի Ֆրանսիական զօրքի յաղթական ընթացքը մինչև նոյն իսկ Կէօնիգսբէրգի դռները, միայն «ցանկարծի» կամ «պատերազմական անաջողութեան» հետևանքներ էին...

1870 թուին մենք յաղթվեցանք, որովհետև թէ քաղաքականութեան մէջ, և թէ պատերազմական գործունէութեան մէջ, մեր սխալները անչափ էին, որովհետև կայսրութիւնը պատերազմը հրատարակեց առանց արդար պատճառի, առանց դաշնակիցների, առանց բաւական զօրութեան և որ ամենից գլխաւորն է, առանց հմուտ և փորձ զօրավարների։ Եթէ զինուորները ու նախկին կայսրութենից մնացած նեղքին ատիճանաւորները կուռում էին արժանի քաջութեամբ, դրա փոխարէն, անհամաձայնութիւնն և անգործութիւնը տիրում էր գլխաւոր զօրավարների ու հրամանատարների մէջ։

Ահաւասիկ ճշմարտութիւնը. պէտք է դրան ճանաչել և առանց ամաչելու ասել, և ոչ թէ մեծ մեծ նախադասութիւններ ասել, ու ամեն բան բաղդի ու «ցանկարծի» վրա ձգել։

Այս սխալը կառավարութեան և ազգի սխալն էր. ազգի, որովհետև նա փոխեց այն բաղդաւոր ընթացքը, որ ճակատագիրը որոշել էր նրա համար։

ՍՊԱՆԻԱ

—

Այլ և այլ հեռագիրներից քաղում ենք Մօնկազիի մասին հետևեալ տեղեկութիւնները։

Մօնկազիի կասացիօնական բողոքը մերժվեցաւ, նրա առաջնութիւնը հետզհետէ լաւանում է։ Մօնկազիի պաշտպանը 7,531 սորագրութիւններով մի խնդիր ներկայացրեց, որի մէջ խնդրում է որ նրա պատիժը մեղմացնեն։ Մօնկազիի կինը մի 19 ամսական երեխայի և թագաւորասպանի եղբօր հետ, եկել խնդրել է տեսնվել թագաւորի և Աստուրիայի իշխանուհու հետ։ Պ. Կանովան ընդունեց պաշտպանին, բայց նա մերժեց տեսնվել Մօնկազիի եղբօր հետ։ Պ. պ. Կաստելարը և Սագաստան գընացին խորհրդակցելու պ. Կանովայի հետ, որպէս զի նա խորհուրդ տայ թագաւորին մեղմացնելու պատիժը։ Աւանդութեան համաձայն Մօնկազին այսօր (3 յունվարի) յանձնվեցաւ այն հոգևորականներին, որոնք մահապարտներին ուղեկցում են դէպի պատժի տեղը։ Բանտի մէջ մի մատուռ են շինել, ուր Մօնկազին քսան և չորս ժամ պէտք է աղօթք անէ։ Վաղը առաւօտ դահիճը նրան կը խեղդէ։ Սուրբ Իլդէֆոնս եկեղեցու քահանան երկար ժամանակ խօսակցեց նրա հետ, որից յետոյ նա խնդրեց որ մի խոստովանահայր ուղարկեն իրան մօտ։ Բանտի քահանան մի ժամու չափ խոստովանեցնում էր նրան։ Մադրիդի Պրատէր Գվարդիասում էշաֆօտ բարձրացրին։ Մահապարտին կառաջնորդեն այնտեղ առաւօտվայ ժամը 8-ին. մահապարտը շատ վհատած է։ Երէկ նա իր ընտանիքին մի քանի նամակներ գրեց, որոնց մէջ նա իր յանցանքի համար ներողութիւն է խնդրում։ Նա սաստիկ զղջում է. և ասում է որ նա մեծ մխիթարութիւն է զգում մեռնելու կաթոլիկական եկեղեցու ծոցում։ Մի նամակում, որ նա գրել էր իր փաստաբանին, նա ասում է. «Ես ոչ օրի չեմ մեղադրում։ Ես ներում եմ ամենքին։»

Մօնկազին այսօր (4 յունվարի) քաղաքից դուրս խուռն հանդիսականների առաջ կախեցին։ Բոլոր այն քսան չորս ժամը, որ նա անցկացրեց մատուռում լսելով քահանայի երկար ու բարակ քարոզները, բոլոր այդ ժամանակամիջոցում նա ոչինչ զղջումն չարտայայտեց և միշտ մի և նոյն հոգու անխռովութեան մէջ էր գտնվում։ Նրան մի ծածկած կառքի մէջ տարան պատժի տեղը. մինչև վերջին վայրկեանը նրա հոգու անխռովութիւնը զարմացնում էր ամենքին։ Նրա մարմինը մինչև երեկոյ կախված կը մնայ։ Երէկ ժամը 12-ին զիշերը, Մօնկազին իր կարողութիւնը իր կնոջ կտակեց։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Վան, 2 յունվարի

Վախենալով թէ ընթերցողներն կը ձանձրանան երբ յաճախ հարատահարութեանց վրա գրեմք, ուստի այսօր բաւական կը համարիմք միայն երեք բան յիշել և կանցնեմք ուրիշ նիւթերու վրա գրել։ Նոյեմբերի 27-ին Խիզանի Իզոնց գիւղացի Մ. Մուրատ անուն հայն սպաննուեցաւ քիւրդերէն գլուխն մամուլի մէջ ճմլուելով։ Դեկտեմբերի 5-ին Խէճ գիւղացի Կիւլօի փեսայն (հայ) Հնդստան գիւղի քովը սպաննեցին քիւրդերն անդամ անդամ կտրելով և ասելով թէ «ահա մեք կը սպաննեմք զքեզ և թող կեավուրներու թագաւորն դայ զքեզ ազատէ և քրիստոնէից ազատութեան համար պատերազմներ անէ»։ Նոյեմբերի 25-ին մէկեցի չորս հայ 12—14 տարեկան օրիորդներ բերուեցան այստեղ, զորս քիւրդերն յափշտակէլ, բռնաբարելէ և մահմետականացուցանել աշխատելէ վերջ երբ տեսած էին որ չը յաջողիր, կառավարութեան յանձնած էին. կառավարութիւնն ալ Մուշէն յղեց այստեղ կուսակալին ներկայացնելու, որպէս զի այն աղջիկներ կրօնափոխ անելու հնարք մը գտնէ։ Կուսակալն նկատելով թէ աղջիկներն այստեղ աւելի անվախ կը դիմանան քան թէ Մուշի մէջ, ջանայ վերստին Մուշ յղել, սակայն առաջնորդարանն ընդդիմացաւ և դեռ այս խնդիր չը լուծուեցաւ։ Մի օր կուսակալն սապէս պատասխանեց առաջնորդ սրբազանին թէ «մինթէ կարելի է մարդու մը համար պաշտպանել իւր պարտէզի կաղամբներ (լահանա), երբ նորա տուն հրդեհի բռնուած և իւր կին ծննդաբերութեան մէջ լինի»։ Այս խօսքէն լաւ կը յայտնուի թէ հայերն կառավարութեան աչքին կաղամբի նշանակութիւն ունեն։ Գիտէք արդէն թէ Թիւրքիա սահմանադրութիւն ունեցած է, սակայն երէկ կուսակալ փաշայն առանց քուէի միապետապէս անուանեց բոլոր կառավարութեան պաշտօնեայներն իւր ուզածին պէս։ Իբր երկու ամիս է որ կըսեն թէ բարեկարգիչ յանձնաժողով մը պիտի գայ այստեղ Կ. Պոլսէն, բայց օրեր կանցնեն և յանձնաժողովն չէ գար։ Իսկ կուսակալն երթալով աւելի անբարեկարգ ընթացք կը բռնէ։ Տեղւոյս վարչութիւնն նկատելով թէ հարատահարութիւններն երթալով կը շատանան և թէ կուսակալն մասնաւոր ծրագիր մը չիներ է հայերն ցրուիլ Վանէն, Աղթամարայ խաչատուր կաթողիկոսն հրաւիրեց համագումար ժողով կազմել և մի հնարք խորհել։ Կաթողիկոսն եկաւ։ Համագումար ժողովն քանի մը նիստ արաւ։ Սակայն ամենևին արդիւնք մը չունեցաւ. զի թէև թագիրներ գրուեցան և կաթողիկոսն անձամբ կուսակալին գնաց, բայց նա ամենևին կարևորութիւն չը տուաւ։ Դեռ կաթողիկոսն այստեղ է, վեհափառ տիտղոսով կը փառաւորուի և չքեղ հագուստներով ժողովրդեան հիացում կը պատճառէ։

Ժողովրդեան ամեն կարգի անհատներ դէմ են այժմ Երեմիա սրբազանին. քանի մը օր առաջ ստուար հանրագրութիւն մը երևան ելաւ նորա դէմ։ Բայց սրբազանը եկեղեցիներու մէջ քարոզներով կը պօռայ թէ ինքն չը պիտի հրաժարի և թէ ինքն լաւ է քան Ներսէս պատրիարք և այլն։

Կառավարութեան օրէնք կայ ամեն կուսակալութեանց կենարօններ լրագիր հրատարակել, բայց Վանայ մէջ չը հրատարակուեցաւ դեռ, թէպէտ և երկու տարի է որ Վան կուսակալութեան վերածուած է։

Անցած պատերազմին կամաւոր գրուող քիւրդերն, որք այնչափ կորուստներ տուին հայոց, այժմ վարձք կը հատուցանեն կառավարութեան այն ամեն դիւրութեանց համար, զորս նա ընծայեց իրենց որ կարենան չարիք հասցնել հայոց. վասն զի իբր երեք ամիս է որ Պէտերխան պէյի որդոց առաջնորդութեամբ ապըստամբած են և ձ ղ ի ր է քաղաքն առնելով նորա շրջակայներն ալ գրաւեր են։ Կառավարութիւնն մեծ յաղթութիւն մը արաւ նոցա վրա, վասն զի նոցա վրա խրկուած զօրքերն երեք հայ գիւղեր այրեցին ի վրէժ քրդաց. ապստամբութիւնն բոլոր քրդաց մէջ ընդհանուր դարձած է, և հաւանական չէ այս ձմեռ նուաճել զնոսա։ Քիւրդերն շատ կատղած են և դիւրաւ հնազանդել չեն կրնար զի որոշած են անկախ լինել։ Մի շաբաթ առաջ երկիւղ մը ինկաւ այստեղ թէ քիւրդերն Վանայ վրա կը վազին, բայց յետոյ ունայն ելաւ այն երկիւղ, որովհետև քիւրդերն առ այժմ Հայոց գիւղերն աւերել զբաղած են և դեռ քաղաքներու վրա յարձակիլ չեն համարձակիր։ Գուցէ կարգը կը գայ օր մը. քրդաց ապստամբութեան վրա պարբերապէս պիտի գրեմ ձեզ, եթէ նամակ բերող գտնեմ։ Դժբաղդութիւն մը է այս որ յաճախ նամակ չենք կրնար յղել։

Այս ամառ մեծ մասամբ Նորոգուեցան 1876-ի հրդեհէն վառուած շուկայներն։ Հայերն, թէն նիւթապէս տկարացած էին, բայց իրենց ապրուստի միջոց միայն առևտրականութիւնն լինելով, ամեն խնայութիւն արին և շուկայներն չինեցին։ Թիւրքեր շատ զարմացան այս բանի վրա, զի նոքա կը կարծէին թէ հայերն այլ ևս կանգնելիք չունին։ Լուր կը պատի թէ թիւրքերն մտադիր են դարձեալ վառել շուկայն, երբ ապրանքներով լցուին առաւարապէս։ Հրդեհէն ետք բազմաթիւ թիւրքեր վաճառականութեան ձեռք զարկին, սակայն շատերն փլատելով ետ քաշուեցան, ասպարէզն վերստին հայոց թողլով։

Ոսկոյ թանգութեան և փոխադրութեանց դըժուարութեան համար երկու տարիէ հետէ եւրոպական ապրանքներ, մանաւանդ չուխան, շատ սուղ էին այստեղ. քանի մը հայ արուեստաւորներ ձեռնարկեցին և յաջողեցան տեսակ մը չուխա շինել, որ շատ ընդհանրացաւ այստեղ, զի թէ բաւական գեղեցիկ է, թէ ժան է և թէ տոկուն է։ Այս առիթէն օգտուելով շատերն՝ և թողնելով պղծաւոր էնթարին եւրոպական տարազով սկսան հագնուիլ։ Այստեղ շինել սկսած են նաև մանիսա ըսուած այն տեսակ լաթն, որ գլխաւորապէս Մանիսա քաղաքէն կելլէ և նորա անունով կը կոչուի, թէև Հալէպի, Ղամի, Երզնկայի մէջ և այլն տեղեր ալ կը շինուի։ Այդ Մանիսան մեծ քանակութեամբ կը սպառի այստեղ։

Այս տարուան հունձքն սակաւ լինելով, հացն թանգանալ սկսած է։ Ցորենի չափ որ 20—25 ղրուշ էր գարունէն առաջ այժմ 45—48 ղրուշ եկած է։ Հացի համեմատութեամբ ամեն ուտեստն ալ թանդացեր է. դորա մէկ պատճառն ալ ոսկոյ բարձրանալն է, զի 100-նոց ոսկին այժմ կարժէ 170 ղրուշ պղինձ, 320—30 ղրուշ թղթադրամ։

Տակաւին մինչև այսօր (դեկտ. 12) ոչ ձիւն եկած է և ոչ ցուրտ եղած է։ Այս բան շատ տարօրինակ է Վանայ համար։ Զի ուրիշ տարիներ այս միջոցին երկիրն ծածկուած կը լինէր ձիւնով։ Եթէ ձմեռն այսպէս մեղմ չը լինէր, միս և ուրիշ ուտեստներ աւելի թանդ պիտի լինէին, և եթէ յաջորդ հունձերն այժմէն աղէկ չերևէին, ցորենի չափն 100 ղրուշ բարձրացած էր այժմ։ Աշունն շատ անձրև եկաւ և հունձքերն աղէկ կերևնան այժմիկ։

Արարատեան մեծանուն ընկերութեան կոդմանէ դեկտ. 6-ին Վան եկաւ պ. Մ. Փորթուգալեանց, որ Վասպուրականի վարժարանաց տեսուչ կարգուած է։ Պ. Փորթուգալեանը մօտ օրերս պիտի բանայ Արարատեան վարժապետանոցն, որոյ բանալ որոշուելն անշուշտ լսած էք մինչև ցարդ։ Արդէն «Արարատեան ընկերութեան» գիւղային երկրորդ վարժարանն բացուած է նոյեմ. 1-ին Կիւսնենց գիւղին մէջ պ. Մարկոս Նաթանեանի ձեռամբ, որոյ «Արար. ընկերութեան» տեսուչ լինելն գիտէք արդէն։ Կիւսնենցի վարժարանին մէջ կը կարդան այժմ 80 երկսեռ աշակերտներ, Վանայ ժողովուրդ զարմացած է «Արար. ընկերութեան» վրայ, և անհուն համակրութիւն ունի առ այն։ Դեկտ. 10-ի կիրակին «Հայրենասէր ընկերութեան» լսարանին մէջ անթիւ բազմութիւն խռնուեցաւ պ. Մ. Փորթուգալեանի ատենաբանութիւն լսելու և զինք տեսնելու համար։ Նա ուր խօսէ, ժողովուրդ անդադար կը վազէ։

«Մշակի» ազգասէր ոգին և ազատական ուղղութիւնն շատ հաճելի է Վանայ երիտասարդութեան, և այդ պատճառով շատ կը փնտռուի այստեղ։ Եթէ մի օրինակ «Մշակ» տեսնուի, հարիւրաւորներ կը վազեն կարդալ զայն։

Նամակս բաւական երկարեցաւ թէև, բայց կը խնդրեմ չը ձանձրանալ։ Վասն զի կասկածելով թէ դուցէ չը կարենամ մօտ օրէն դարձեալ նամակ յղել, քիչ մը ընդարձակ գրեցի զայս։

Մ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՓԱՐԻԶ, 21 յունվ. (3 փետրվարի)։ Որովհետև բոլոր ջանքերը Դիւֆօրին համոզելու իր պաշտօնի մէջ մնալու համար ապարդիւն եղան, այդ պատճառով Գրէվի յանձնեց Վադինգտօնին կազմել մինիսթրների մի նոր կաբինետ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ Այսօր ճանապարհ է ընկնում Մէկլենբուրգ-Շվերինեան հերցոգը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունվարի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 55 կ., երկրորդ 94 ր. 75 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 87 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 230 ր., երկրորդ 231 ր., արևելեան առաջին 92 ր. 25 կ., երկրորդ 92 ր., ոսկի 8 ր. 65 կ.։ Լոնդոնի վրա Ռուսաց 1 ռուբլ արժէ 22,75 պէնս։ Տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր — Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՄԻԱԿ ԴԷՊՈ արծաթած, և ոսկեզոծած իրեղէնների, (սեղանի, թէյի և այլն) Կրիստոֆլ և ընկ. (Christofle et C-°) գտնվում է Թիֆլիսում, Տօլլէի խանութ, Սօլոլակի № 4։

6—6

ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐ ՐԱՅԳՕՐՕԴՍԿԻ ստացել է մեծ քանակութեամբ հայելիների ապակիներ զանազան մեծութիւններ։ Ընդունում է պատուէրներ չափազանց էժան գներով։ Նորոգում է հին և փչացած հայելիներ։ Հայելիները ծախվում են շրջանակներով և առանց շրջանակների։ Ատամանակայա փողոց, փոստի շինութեան մէջ, տուն Լօրիս-Մելիքովի։ 4—4

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ Բերնար Իլիչ Միրզոէվ, որ բնակվում է Արսենալնայա Դաւիդովսկայա փողոցների անկիւնում Միրզոէվի տանը, ԸՆԴՈՒՆՈՒՄ է գործերի համար և առաւօտեան 8-10 ժ. և երեկոյեան 5-7։

4—3

Լոյս տեսաւ պ. ՅԱՐՈՅԻ բրոշիւրը—«ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼը Ռուսաստանում և Կովկասի մէջ»։ Գինն է 30 կոպ. Ծախվում է Թիֆլիսի ՌՈԼՈՐ գրավաճառների մօտ։ 4—4

РАСПРОДАЖА БЕЗЪ ЗАПРОСА.

По случаю прекращенія розничной торговли и открытія оптоваго склада, назначается **распродажа** по самымъ дешевымъ цѣнамъ, на 25% дешевле обыкновенныхъ цѣнъ, товаровъ: крепъ, ардаганъ, матласе, репсъ, фай. карсъ, къруасъ, кашемиръ черный отъ 75 к. до 2 р. 30 к. альпага черный отъ 35 к. до 75 к. шали суконныя отъ 3 р. 25 к. до 7 р. 35 к., ковры бархатные, тикъ холщевый, рубашки полотняныя, и т. п. Въ каравансараѣ Тамамшева, верхній этажъ, противъ гостиницы Кавказъ, №№ 10 и 11 магазинъ **Малакова**.

3—4

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ որ գտնվում էր Գոլովինսկի պրոսպեկտի վրա Սարաջևի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՈԼՈՎԻՆՍԿԻ պրոսպեկտի վրա, ՇԻՕԵՎԻ տանը, Գերմանական կլուբի և Վէստլիի ֆոտոգրաֆիայի մօտ մի և նոյն սանդուղքով։ Այցեողների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 5 ժամը։ Հաւաքածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած։

23—25

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽՍՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ ստացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՕՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունենք, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս էլ գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

30—75

ԹԻՖԼԻՍ հիւրանոցում Դրվորցովայա փողոցի վրա, Սարաջևի տան պատրաստվում են բլիններ յունվարի 17-ից առաւօտեան 1 ժամից մինչև երեկոյեան 4 ժամը։ Մուտքը բակից է։

1—4

ДѢВИЦА ищетъ мѣсто КОМПАНІОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ: Старокатолическая улица, домъ Чиковани № 10

ՄԷԿ ՕՐԻՈՐԴ ցանկանում է ընկերակցուհի կամ ՏՆԱՑԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ պաշտօն ունենալ։ Հարցնել, Ստարօկատոլիչեսկայա փողոց, տուն Զիկովանի, № 10

ОБЪ ИЗДАНІИ

ВЪ 1879 ГОДУ ВЪ БАКУ

ГАЗЕТЫ

БАКИНСКІЯ ИЗВѢСТІЯ

ГОДЪ ЧЕТВЕРТЫЙ

Цѣна газеты на годъ въ Баку съ доставкой 5 р., на полгода—3 р.. на три мѣсяца 1 р. 75 к., въ мѣсяцъ 75 к. Съ пересылкой во всѣ города имперіи на годъ 6 р. на полгода 3 р. 50 к., на три мѣсяца 2 р. на мѣсяцъ 90 к.

Подписка принимается въ Баку въ домѣ Дадашева, на Милютинской улицѣ-близь гостинницы „Кавказъ“ и въ Бакинскомъ Обществѣ Взаимнаго Кредита.

Иногородные адресуютъ свои требованія исключительно: *Въ Баку, въ редакцію Бакинскихъ Извѣстій,*

ОБЪ ИЗДАНІИ ВЪ 1879 ГОДУ

ЛИТЕРАТУРНО-ПОЛИТИЧЕСКОЙ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

ГОДЪ СЕДЬМОЙ

Въ 1879 году ***Тифлисскій Вѣстникъ*** будетъ издаваться ежедневно, за исключеніемъ дней послѣпраздничныхъ, по прежней программѣ.

Подписка на 1879 годъ открыта и принимается въ конторѣ редакціи на Эриванской площади, № 3.

ПОДПИСНАЯ ЦѢНА:

	НА ГОДЪ.	НА ПОЛГОДА:
Въ Тифлисѣ, безъ доставки. . .	10 р.	5 р. 50 к.
» съ доставкой. . .	11 »	6 »
Съ пересылкой по Имперіи. . .	12	6 » 50 »
За границу по почтовому союзу.	15	8 »

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ въ редакцію ***Тифлисскаго Вѣстника***.

ՅՈՒՆՎԱՐԻ 24. ՏԵՂԵԿԱՑՈՒՑ ԹԻՖԼԻՍ. 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Յունվարի 23-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	53
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1630	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1320	—
Վիգրինի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրինի »	229	—
Մարսելի կուրսը 245—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա.	10	30
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	40
» միւս տեսակը.	7	30
» չաքարաւազը.	6	—
» տրանզիտը. .	6	80
» մաքուր վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	7	40
Միւս տեսակը հին սերմից.	6	70
Բուրդը թուչի . . .	8	—
» թարաքամի .	4	10
Աւիւր Շորագալու . .	1	80
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	60
Մետաքս Նուխուլայ . .	190	—
Կախեթունը. . . .	140	—
Կոկոնը Նուխֆայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լասը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	27	—
» լիվանի . . .	23	—
» մարտինկօյինը	18	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան . .	2	
Աւստրիա . . .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանկականների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30 — 50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով.

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվո (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվո.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլօվո. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2, 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվումէ Թիֆլիսում ամեն օր։ Բաքուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակատ վեներական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէյլիս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակատ վեներական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակատ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակատ վեներական և կաշու հ., Բէյլիս աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԹԻՖԼԻՍ. Գ. Մ. Ստացանք յօգուտ Արարատեան ընկերութեան 20 ռուբլ։

—ԵՐԵՒԱՆ. Ա. Եր. Նամակը և վերջին հեռագիրը ստացանք։ Կը կարգադրենք հեռագրի համար։

—ԲԱԳՈՒ. Կասպիացի. Ստացանք ձեր նամակները։ Շնորհակալ ենք ձեր աշխատութեան համար։

—ՎԱՆ. Մ. Փ. Սպասում ենք ձեր նամակին այդտեղի գործերի դրութեան մասին։ Նամակը մեզ աւելի շուտ կը հասնի, եթէ Դաւրէժով կուղարկէք։

—ԴԱՒՐԷԺ. Մ. Ռ. Փ. Կը մտածենք ձեր առաջարկութեան մասին։ «Մշակ» կուղարկենք։ Եթէ Վանից ձեզ նամակներ ուղարկվեն խմբագրատան համար, խնդրում ենք շուտով մեզ հաղորդել։

Дозволено Цензурою 23 Января 1879 г. Тифлисъ Տպարան Գ. Մարտիրոսեանցի Типографія Мартиросіанца